վանքում, ուր բերուած է վաթսուն տարի առաջ Աֆանդուս նախկին Թուրքարնակ, այժմ Նորաշէն կոչուած՝ գիւղից, որ գըտնւում է լճի հարաւային ափին՝ դէպի Բայազիտ տանող ճանապարհի վերայ։ Խաչի



**Պատկեր 47**

Մանրանկար Սարգիս Պիծակի. Ձեռ. Երուս. N 1973, 258բ. 1346 թ.

կազմողն է, այսինքն արուեստաւորը, Տըրդատ՝ Հայրապետ արհեպիսկոպոսի բարեխօսութեան համար, 1653 թուին, ճակատի արձանագրութեան համեմատ (պատկ. 48) (1).

+Սբ խչս բարէխաւս Հյրապէտ ահրէպիս
+ին + յիշեց գ.քն։ թվ ռճբ։ Տրsատ(s!) կզմղ.

Խաչարձանի կեդրոնում խաչելութիւնն է. Յիսուս խաչուած է մի զարդարուն խաչի վերայ, ուղիղ կանգնած, ծնկներից էլ ցած հասնող, քղանցքները զարդարուն՝ կոլո-

(1) Մեր ձեռքի տակ եղած պատկերը բիչ աղօտ լինելով՝ այս լուսանկարն էլ ստացել ենք ուսուցչապետ եւ Լենինգրադի պետական էրմիտաժի արեւելեան բաժնի վարիչ Յովսէփ Օրբելուց, որին եւ յայտնում ենք շնորհակալութիւն։

Խաչի բարձրութիւն է 2¼ արշին, իսկ լայնութիւնը 1 արշին, որ մեր խնդիրքով համառօտ նկարագրել եւ հաղորդել էր Գիւտ եպիսկոպոս։